ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի եզրակացությունն ընդդեմ Հ2 հեռուստաընկերության՝ Սամվել Մարտիրոսյանի դիմումի վերաբերյալ

Քաղ. Սամվել Մարտիրոսյանը դիմում էր ներկայացրել ընդդեմ Հ2 հեռուստաալիքի:

Սամվել Մարտիրոսյանը «Հ2» հեռուստաընկերության գեղխորհրդին է ներկայացրել «13-րդ վայրկյան» ինտելեկտուալ խաղի նախագիծ: Առաջարկը չի ընդունվել, սակայն որոշ ժամանակ անց հեռուստաալիքով սկսել է հեռարձակվել «Օդից փող» խաղը, որում Ս. Մարտիրոսյանը նկատել է իր առաջարկի նմանակման տարրեր: Ս. Մարտիրոսյանը ներկայացրել է իր խաղի նկարագրությունը, իր հեղինակային իրավունքի փաստաթղթեր, ինչպես նաեւ իր կազմակերպած «13-րդ վայրկյան» եւ «Հ2»-ի «Օդից փող» խաղերի տեսագրությունները եւ խնդրել եզրակցություն տալ՝ արդյո՞ք ճիշտ են իր դիտարկումները, որ երկրորդը կարող է առաջինի ծագման հիմք լինել: Դիտորդ մարմինը դիտարկեց Սամվել Մարտիրոսյանի «Սահմանք իմաստասիրաց» խաղի տպագիր օրինակը, դիտեց «13-րդ վայրկյան» եւ «Հ2» հեռուստաալիքով հեռարձակվող «Օդից փող» խաղերի տեսագրությունները եւ եզրակացրեց, որ երկու խաղերի միակ ընդհանրությունը գաղտնագրված ասացվածքի բացահայտումն է, ինչը Դիտորդ մարմնին բավարար հիմք չի տալիս եզրակացնելու, թե խաղերից մեկը կարող է մյուսի ծագման հիմք կամ պատճառ լինել:

Միաժամանակ, դիտորդ մարմինը համարում է, որ Սամվել Մարտիրոսյանի անցկացրած «13-րդ վայրկյան» խաղը բավականին հետաքրքիր է, եւ նրա նախագիծը հաջողությամբ կարող է իրականացվել ինչպես «Հ2»-ում, այնպես էլ որեւէ այլ հեռուստաալիքում:

Ընդունվել է Դիտորդ մարմնի 2007 թվականի հուլիսի 4-ի նիստում